Կատուն, զումը, կնիքն էլ հետը ճկերքով,
Մկներին տպին, սով անեեք նրան մեռցրեց:

Իմ խեղճ ուստա՞ էլ մի էտքան դարդ անիր
30 էս որ տեսար, կամ լսեցիր, եղ կացիր
Թող հոտած փողն, հոտած մարդին փայ լինի
Աստված քունը Հալբաթ մեկ օր կհասցնի:

1843 թ. Թ-ն օգոստոսի
Թիֆլիս.

ՆԱՄԱԿ ՀԱԽՎԵԲՄԱԶԻՆ

Ա դ ա

Ես տեսնում եմ, որ թեկուզ իմ գիրը ձեզ համար, թեկուզ Կավկասի քամին: Ո՞չ պատասխան կա, ոչ կատարումն Ավսոս իմ ժամանակին, ափսոս իմ բերնին, որ նհախ տեղը բանում եմ: Էլ փողի հեսարի մասին շեմ գրում էս անգամ, ներեցեք մեկ երկու խոսք էլ ասեմ, հետո էգուց, էլօր որ զնամ, ո՞չ գու կարծես քո մտրումը, թե ես հիմար էի, բան չէր հասկանում, ոչ իմ սրբումը դարդ մնա, թե խոսքն ընկած տեղը՝ շասեցի: Դու մի կարծիր, թե որ ես քեզ նման շատ փող շունիմ, էս ա աշխ ծակ՝ որ խարեայովյունով այլոց փողն ուտեմ: Իմ միսն ուտիլ ինձ համար լավ է, քանց էգ բանու Ազգատ եմ էկել աշխարհ, աղքատ էլ կէրթամ, ամա հարամ քան ոչ բռնել եմ մինչև չսօր, ո՞չ էլ կրոնեմ: Ես քողի կամ ալլոց մեկ քանի մուստառ մանեթի խաթեր՝ իմ պատիվը, իմ խոսքը գետնովը շեմ տալ, լավ իմանաք: Էստով շորս անգամ է, որ գուք իմ գառն աշխատանքով գատած փողը կտրում էր: Հայտնի քան է, ոչ թուր ունեմ, ոչ թամասովկ, որ իրավունք գտնեմ: Ես կցանկանայի, որ գուք մի աղքատ մարդ էիք եղել ու ձեր որդու պես շնորհալի աննման որդի ունեցել, ես նրան անփող ուսուցանեի, որ իմանայիր, թե իմ գարդը փողը չի, այլ մարդի մարդատեղ շցելն է: Մեկ օտար ազգ որ էկել էի, էս շէիք անիւ Ավալի սիթիա որ մեծ որդուք ինձ տվիր, խոստացար տարին ութ թուման: Տարի: ու կես անց կացավ, փոքր որդիդ էլ բերիր, կես տարի էլ նա էր ինձ մոտ, հետո բոլորի համար վեց թուման տվիր: Էլ փողի համար չէր, Հին մեկ անգամ գուս արի, շունքի կես տարին լրանում էր, փողն ուզելով բերանս հռտեց: Վերջը էլի որ կրկին նա ինձ մոռ մտավ, սեպտեմբերին էր, շոնքի գրած ունեի, երկու տրեսի փողը կարգին ովիր— հետո ասեցիք, թե մեր վաղեն նոյեմբերին է սկսվում: Հիմիկ նոյեմբերին ու գեկտեմբերին եմ ուզում, ասում եք տվել եմ: Հապա էս օխտը ամսվա հախիցը շնուանք, որ մեկ կոպեկ շեմ ստացել: Եղ կնշանակի, որ ես սուս եմ ասում, քո փողն ուզում եմ ուստիլ: Թե էսպես ըլի, աններ տալը պառավի գործ է, բայց որ մարդի ճարը կտրվում է, սրտի գարդը անեներով է գուս բերում: Թե ես եմ սուս ասում, Աստված էն միակ որդուս խերն շուս, նրանից դարդակ մնամ, թե չէ պ. Ամենաբարին արարիշը էս աղքատ վարժապետիս զրկանքը էնպես՝ թռ առաջն բերի, որ քանի մտածես, էնքան ցավիս ու էրպիս... մարդ Աստվածու՝ ասենք գատաստան, օրենք խղճմտանք քեզ շեն ներգործում: Որդիկոց, զափակի տեր ես, ախր նրանց էլա խեղճ արի, ինձ որ էդ ես անում, որ աշքի միս ու կյանք եմ փշացրել, բաս ուրիշին՝ ինչ շես անիլ: Էզպես մեր հեսարք պրծանք. քեզ բաշխեցի բալորն էլ, որ դհա հարստանաս: Բայց արդարություն, անմեղություն իրանց մընթէ կառնեն՝ Աղա, լավ իմացած ըլիք: Մենակ դուք շեք էս քաղաքումը իմ համար կտրել, բոլորն էլ՝ ես ճամրի օրենությունը կտամ իմ սըրտումս, քանի շունչ ունեմ, որ ինձանից փող կտրովը իր կյանքիցն ու տանիցը շներվի, զափակին շեմ ասիլ, շոնքի անմեղ զափակը ինչ գյունահ ումի:

Ուզեցա էս գիրը, ինչպես առաջ, փակեմ ու էնպես ուղարկեմ քեզ մոտ, աստանի աշքը քուանահ, մոռացա կարելի ա շերիցս վիր ընկնի, ուրիշ մարդ

վերցնի, կարդա մեր սըռն իմանա, էն ժամանակն լցավիս, Հախի մասին
գատաստան կերթան, էս ժամանակ վերսիլ շունեի, գիրս էլ բիրադի դժվեց.
ոտք դեմ տվեց, որ Հախվերմազ մարդի մոտ շեմ գնալ, շեմ գնալ էլի ինձ
կճղի, գեն կըցի, յա Հարկավորությանը.. շեմ գնալ, յա պատոիր
ինձ, յա ծոցդ գիր, պահիր. կարելի է՝ թե բաղարովն անց կինալիս, շունչդ
ըլի դիպած, գիրս վախու ծոցիցս թռած: Չբարկանաս աստծո խաթերք:

1 Տեսանեմ քեզ Այր ալեվօր
Անցեալ ամօք ու տարեվօր
Առարեղս այս յիմար անցիր
Այ ոչ ունի քեզ կարեվօր:

Սերացեալ ես և դոզդոշաս
Զոր ինչ գտանիս որոճաս
Ասայ ինձ մինչ երբ քոն մնաս
Որ այժմուս ոչ արթնանաս:

Սերացեալ ես ապաշխարեայ
10 Անցեալ մեղքերդ ապաշաւեայ
Լեզուդ սանձեայ շատ մի խօսար
Աղերսեայ տեր դանձդ աշխարեայ:

Դու այլոցն կարծես յիմար
Բայց դու բազմօք քան¹ զայլս տիսմար
Երբ դու քեզի ոչ ճանաշես
Մի դատեր զայլոց² քեզ յարմար:

Այր դու տեսանեմ քեզ բարի
Բայց յետեաս կամօք շարի
Այժմ հաճախ ժամ ընթանաս
20 Յետոյ անցուցանես տարի:

Երանի քեզ որ ծերացար
Եւ աշխարքմեն շուտ անցար
Իմաստութեամբ կեանս անցուցեր
Եւ բարի օրինակ եղեր.

Իմաստութեան դու սէր ունիս
Եւ բարի ուսման կարօտիս
Բայց ընդեր դու շարեաց լսիս
Եւ ընդ նոցայ միշտ վարանիս.

Ով այս դու լուր յին իմաստնոյն
 30 Որ բազում ամօք յինագոյն
 իմաստութիւնն ... երկուդ տերան
 Առնէ ավուրս քոյ միշտ գառն,

Իմաստուն ես, բայց վիոքք հպարտ
 Վասն այն մնայ, քոյ վերայ զարդ
 Կոնացիցիր որ բարձրանաս
 Եւ մեծութեամբ արժանանաս:

Միշտ հետեխս իմաստութեան
 Եւ յետեխս յետւարննութեան
 Բայց դու շատ ինձ բարին խօկայ
 40 Այն խօկելին թող տեր հոգայ:

* * *

1 Զայն ազաղակի որբոց և այրեաց փակէ զլսելիս。
Դղոդայ քաղաքն¹ ժփեն բնակիչը ի ճեղեղ արեան.
Արքայն Հերակլէս քաջ նիզակակցովք² յոզբաձայն լալիս
Թողու զիւր աթոռ կախէթեան յանտառու լինի ապաստան:

Ի գան տագնապի Հայր զորդի, զտոն մոռանայ, թագչի,
Եւ սուր սեագունդ գառնաշոնշ պարսկաց կատաղի անհնարի³
Զորդի ի ծնողաց, զհարսն յառադաստէ վարէ իւր գերի,
Աղայ Մահմադ-խան⁴ անսիրտ բռնաւորն անոդորմաբար.

Ի տանէ ի տուն մատանն գահինք մերկեալ զսուսեր
10 Կոծ ողբերգութեան զբարինս գալարէ, մանկանց և տղայոց
Լերինք Տփիսուոյ հեծեծեն ի ցաւ բնակլաց անտէր,
Այլ անօրէնին սիրտ արեանաբրու ոչ շարժի յողըց:

Վեհազունք վրաց վատնեալ զյետին ճիս զօրութեան իւրեանց
Եւ արքայն զթուտ⁵ ի ճեռուստ կացեալ յայս գառն տեսարան
Հային և ողբան, քայց անզօրացեալ յանթիւ թշնամեաց
Փակեն զդէմս իւրեանց, փախսին⁶ զի մի՛ վկայ լիցին շարութեանն

Գանձք, Հարստութիւնք, կալուսծք⁷ մանկազինք աւար Հարկանն
Ապարանք շքիզզ, զանոյք փարթամաց թազին ի մոխիր,
Զոր ձեռք արեանոռչտք⁸ կործանել կամ խւել անդ ոչ կարացին
20 Անյագ հրդէհին եղեւ կերակուր և անդարձ ոճիր

Թայց և յայս միջոց սուրբ առաքինութիւն
Ցուցանէ մեզ զիւր հզօր զօրութիւն
Զորական մի խիստ թուրք պլոկած
Մտավ մեկ փոքր տուն⁹ աշքն արյունով լցած.

Կամեր որ իսկույն սրախողով անի
Ինչ որ տանը կայր ծառա թէ ընտանիւ

¹ Պղրդայ քաղաքն [ի սուզ հ...]

⁶ [դիմենալու]

² [վաստակեալ]

⁷ [կայր]

³ [անդութ]

⁸ Զոր լուց հրդէհին], ձեռք [կողոպտելոց]

⁴ [Յահրաս ի տես]

⁹ [Դահէհ զօրականն պարսիկ մէկ փոքր

⁵ Եւ [հակայ] արքայն

¹⁰ մանք ժամեալ]

Երեխիս մի անդ¹ գետնի վրա ընկած
Անտեր, անքոմակ աշքն երկինքն քցած

Քիչ էր մնացել որ ավանդի Հռովհին
30 Եվ խղճալի մայրն տեսյալ յուր որդին
էս դառն վիճակումն, ծնկան վրա ընկած
Ողբայլ² դառնապես աղաղակեր զԱստված:

Եատ լալոցն և սպոցն հատյալ էր ձայնը
Հէնց էն էր կամում³ ցավագար որդուն
Մածկի⁴ և փոքր ինչ միսիթարի նրան,
Մեկ էն տեսավ՝ դահիմն մտավ տուն:

Եղի սուրբ տիրամայր սրբոց պահապան
Քեզ եմ ապամինել հա՛ս ինձ օգնության
Ասաց և գրկյալ⁵ որդին յուր միայն.
40 Ինորբ ի գահնեն թափել յուր արյուն

«Թէ ուստի» գաս օտարական շգիտեմ,
Բայց և քո ձեռք մնուցին զավակս և դու էլ
Հայր ես էլած, ունիս զորդիս, ես կարծեմ.

¹ [աղօտատ մի անգ լէնյ]

² [Աղաձեր զասոռաւծ]

³ [ուզում]

⁴ Մածկի [ոք բուրալ]

⁵ [Ոռերբ տատվածածին, զու ես իմ ճարը]

⁶ [Բայց և գրկովին]

⁷ [Կամար իմ բոլոր զոն լիցի աշակեմ]

Բանականեր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ



Բ Ա Յ Ա Ռ Ի Ք :

Երկընքի կանաչ կարմիր,
Այս սիրուն կանաչ, կարմիր.
Լեռդս ու թոքս շորացել են,
Սար ու ձոր կանաչ կարմիր:

Դաշտի ծաղկի ռանգեռանգ
Մեզ նման կարճ է օրն ու կյանք:
Սաղմկն, որ հոտ չունենա,
Էլ ինձ օգուտ, ռա'նգ է, ռա'նգ:

Ընկել եմ՝ ախ՝ սարեսար,
Դարման չունեմ, ոչ մեկ ճար:
Ուզում եմ, գամ քո ոտը,
Առաջս ծով ա սար է սար:

Տես էս զշերի ա՝խ՝ դասրեն,
Մոտդ եկան, քեզ հասրաթ են,
Թոփիր դրանց հետ ու արի',
Թուրն ինձ խփիր, քեզ դասրեն:

Էնտուր համար եմ, էնտուր
Էրվում, որ պրծնեմ ա՝խ՝ մեկ օր
Աշխարին ինձ տաս, պետքը չի,
Թուրն ինձ խփիր, քեզ դասրեն:

Մրտիս մի տար, որ կրես,
Ինձ փոթոթես, խորովես
Հոգիս ուզիր, ես քեզ տամ.
Թող մեկ տեսնիմ քո երես:

Կանաչել են սար ու ձոր
Զենս բարակ, սիրուն խոր:
Հոգիս էլ տամ, շես լսիլ,
Ի՞նձ ես ընկել սար ու ձոր:

Սիրուս կաթել ա՝ արին,
Քո մարմինեն եմ, քո արին,
Ե՞ղ արի, մեկ աշբովդ տե՛ս,
Թե սիրելուք ի՞նձ արին:—

Էն տանց մեռնիմ, ախ էն տան,
Որ աշքդ բացիր՝ աննման։
Մեկ բուռը հողիդ եմ կարոտ,
Ասա՛, որ ինձ ախ՝ էն տան։

Ո՞վ ա լսել՝ սաբ սարի
Դիպչի մոտ գա ու կպչի
Քո սար զլխին ես զուրբան,
Ինձ մի անիր սարսարի։

Դոշիս վրա բարբաջան
Արին, տարան քո նշաննե
Թե սազ սազ էլ հողը մտնեմ,
Ո՞վ կըլի իմ բար բաշանն։

Քեզ որ տեսա ջրի սաղին,
Խելքս թռավ էն հադաղին,
Հենց մարդ պետք է հոդին տա,
Որ շապանես դու սաղին։

Ոչ ձենս ես դու իմանում,
Ո՞չ շռմշա առնում, ինձ տեսնում.
Էնքան գռնեդուս ընկա,
Բեղնամ էլավ իմ անում։

Ի՞նչ ես տանջվում՝ ա՞յ նաշար,
Որ քեզ չկա մեկ հավարու
Մեկ սիրու որ դարդ շիմանում,
Հալրաթ վատ է ու նա չար։

Զին ա գալիս սարի զլխին,
Սարի դոշին բամակին.
Ալքս բցել եմ քո ճամփեղ,
Վայ տալիս՝ իմ չոր զլխին։

Քեզ ի՞նչ արի, որ կտրեցիր
Լեզուդ, ինձմեն բաշվեցիր.
Ի՞նչ ես սրել էդ թուրը,
Մեկ սիրու ունիմ, կտրեցիր։

Սիրուս պատկեր չի, բաշեմ,
Քեզ տամ, ինձ էլ շմաշեմ,
Միս ա, թուր էլ խմում ես,
Ի՞նչ անեմ, ախ չի բաշեմ։

էս տեղ շատ մարդիք կան, ե՛ս
Քեզ եմ կարուտ, քեզ՝ պ՛իս ես.
Որ գաս, տեսնես ինձ հողումն,
Երար վյես տո՞ւք կանես:

Գերեզմանդ. մնացել բաց,
Տումն ընկել առուք ու լաց.
Դվորն գնում ես, ինձ էլ տար,
Բա՛ց երեսդ, աշքդ բա՛ց:

Լա՛ց իմ օրս, ա՛զիզ՝ լա՛ց,
Երար գաս տեսնես ինձ մեռած,
Շատ էլ հասրաթդ քաշեցի,
Ինձ սպանեց սուբն ու լաց:
||

Նի ես էլել քրահլան ձին,
Թար եմ դառել քո կշտին,
Ի՞նչպես պեսոք է անցկենաս,
Էն լեռ սարը, էն խոր ձին:

Ա՛յս ձեր բաշին ու ձեր տան
Կտրին, աշքերս քեզ տեսան:
Թո՛ղ հոգիս ես մել քեզ տամ,
Ում ուղենան, լաշըս տան:

Սիրտս սհաթ է, սհաթ.
Որ թե լարես՝ ա՛խ՝ բեվախտ,
Խարար կըլիւ թե թողաս,
Ու շտեսնես սիարէսնար:

Ինձանից՝ դու ձեռք բաշիր,
Կուզես հոգիս ա՛ռ, բաշվիր,
Մահիս գիրը գրվել ա,
Դո՛ւ էլ արի՝ ձեռք բաշիր:

Գնացի՛ր, ախ ե՛դ արի,
Ես մեռնում եմ, ե՛դ արի:
Դու իմ՝ յարես կապեցիր,
Էն էլ դարդու եդ արի:

Աշբս ճամփիդ ա, արի,
Արի՛ հոգիս ա՛ռ, արի՛:
Գյումահս երեսովս շոտաս,
Փոշմանել եմ, ինչ արի:

Մի դարդ անիլը, սի՞րս արա,
Ի՞նչ էս էրվում, սիրս արա.
Էզքան առնշվիլ պիտքը չի,
Ինչ առում են՝ սիրս արա:

Բարեկամիոց հետ մեկ տեղ
Թող քեզ սպանեն՝ ախ՝ մեկտեղ.
Անբարեկամ որ մեռնիս,
Հողն էլ չի՝ տալ քեզ մեկ տեղ:

Այս սառն է սառն էս գետին
Ջիջար չունի, մեր սրախ
Թուր է խփում, ու սանում,
Մեր թողը տալիս է՛ս գետին:

Անի՛, Անի՛, ա՞խ՝ Անի,
Թանգողիո տունն քանդի՛,
Քեզ որ սպազեց,
Մեկ լաց ընող ի՞նչ անի:

Ախ՝ իժ արևս մտավ մեր,
Մնացի անհեր, անախակիր.
Դու էիր կյանքս ու արևս
Դու էլ զնացիր՝ այ իժ մեր:

Մնացել եմ մէկ էրում,
Ախ քաշելով ինձ սպանում.
Թէ չիս դարդիս վրա հասնիլ,
Էլ ո՞ւր ես՝ ախ՝ ինձ էրում:

Երեսդ բա՛ց, ե՛գ տար,
Երբ ուզենաս, հոգիս ա՛ռ,
Թող ևս մեկ հողը՝ ախ՝ մտնեմ,
Են վախար ուրեն էլ եղ տա՛ր:

Տար էղ համին՝ ա՛յ սկսուր,
Աշխարքս դանակ ա ու սուր:
Զոռ մարդի թուրն ա կտրում,
Խնդմն ո՞ւր կորչի, ախ՝ ո՞ւր, ո՞ւր:

Ինձ էլեցիր տակեստակ,
Աշխարքից իժ հիշատակ
Կտրվել ա, փշացել,
Ես մնացել եմ ծովի տակ:

Դարդու ընկել քերակ-քերան,
Գիշեր, ցերեկ սուր, շիվան
Զանս առել են, ինձ մաշում.
Ոչ լեզու մնաց, ոչ բերան:

Գլուխս քցել եմ քարերար,
Ոչ տեր ունեմ ոչ հավար.
Այս մեկ ցավիս հասնես,
Սիրաս մկամ քար է քար:

Թէ տաս էլ ինձ թրի բերնին,
Էլ քո զուզն եմ, քո գերին.
Հոգիս քեզ մոտ հո կըլի,
Մոնեմ էզ քո սուրբ բերնին:

Քամու ձեռին տարութեր
Ըլում են ծառն ու ծաղկներ.
Սիրաս որ չի դինջանում,
Հա կաց զլուխս տա՛ր ու բե՛ր:

Հեն տաս, շի՛ լսիլ քեզ կարաս,
Թի լիբն ա մեջն, ձևո շտաս.
Դարդակին դարդդ էլ տան,
Նա չի իմանալ, ի՞նչ կարաս:

Երեսն կակող ա, երես,
Քար չի, որ թրի դեմ անես
Ինչ խոսք ունես, ինձ ասա,
Զանես ուրշին ինձ երես:

Վատարախս եմ, վատարախսն
Ոչ օր ունի, ոչ մեկ բախտ.
Ի՞նչ ես ցավում ազրատի օրը
Սկ ա, վատ ա բախտն:

Սկերես եմ, սեերես,
Տեղն ա, ինչ որ ինձ ասես,
Ո՞ւր քեզ իմ դարդն ասեցի,
Որ ինձ մաշես, սկ երես:

Էսօր գնացինք բանչարի.
Ռաստ էկանք շրի, սարի.
Դարդակ ման գալն պետքը չի,
Խելք ունես, մեկ բան նարի:

Միրքիդ զուրբան՝ այ տերմեր,
Բոյլդ բարզի, չալ բեղեր,
Լելքս տարան՝ բնմորվաթ,
Քանի՛ կանշեմ ախ տեր, աեր:

Զարի ձեռ ընկա, չարի,
Թե սպանի էլ, ինձ էրի,
Ում գնամ ասեմ իմ ցավս,
Ի՞նչ ասեցիր, ես չարի:

Գարդու ջանհան ես էլա,
Ումբրս մաշվել, փշացել ա,
Որ Հող գառած, ես լըլիմ,
Մեկ ախ կրաշե՞ս դու էլա:

Վաղն ա դինին տալիս, վաղի,
Որ չորանս իմ մուրազն
Կմնա փորումս, շի դուս գալ,
Թե գաս հետս էլ վազեվազ:

Ման եմ գալիս մուրնեմոր,
Քեզ չեմ գտնում ա՞յ անդութ.
Արեգակն էլ որ բացվի,
Իմ սիրտս Հո մուրն է մուր:

Տա՛ր իմ Հոգին, Հետդ տա՛ր,
Ես խոր ձորումն մի՛ թողար
Ինձ, որ էրմիմ, խորովիմ,
Շարիր երկրում մնամ օտար:

Կարկուտն դիպալ մեր պտղին,
Մեր Հանդին, մեր ծաղկըներին.
Այս քո դարդն եմ միշտ քաշում,
Նրանք լիս չեն տալ իմ պտղին:

Ինձ ասեցիր քո անում,
Էլ չես գալիս՝ իմ խանում.
Էլ ինչպի՞ս սերդ իմանամ,
Որ էդպիս ես ինձ անում:

Ու տուն ունիմ, ու ամանը,
Թե որ գան, ինձ գողանան.
Հացի կարոտ մնացել եմ,
Դիշերս վայ, օրս ամա՞ն:

Կուզիմ առաջիդ քոչիլ,
Ճամփինդ կապել ու փախիմիլ,
Որ թե արին էլ գու լաս,
Զուր շգտնես, աշքդ քոչիլ:

Ի՞նչ ես էրվում տանն ու դրանն,
Իմ աշքի լիս սիրենկան,
Էդ գարդը քեզ տվողը
Հալլալի կանի մեկ ճար դրան:

Մարդիս կյանքին է առուտուր,
Մեկ խեր կը գտ, մեկ շառշառուր:
Դու քո ճամփինդ մի ծոփր.
Թե պարտը ունես, ա'ո ու տո'ւր:

Զանս քեզ զուրբան Աղա,
Թափափորի աշք Աղա,
Բաս չես գիտում՝ որ սերը
Խոցված սրտի հմար աղ ա:

Ինչ ցավ ունիս, վեր ածիր,
Քեզ կսպանին, մի՛ ժաշվիր.
Սազդ քոշիր, սիրտդ բա՛ց,
Էդ ֆիքրդ թո՛զ, վե՛ր ածիր:

Թանի հարուստ ու քոք ես,
Ամենի աշքի լիսն ես,
Զեռդ պակաս՝ ձեն չի տալ,
Սազդ հաղար էլ որ քոքես:

Թո եսիրն եմ՝ խեղճ արի.
Թուրդ սրտիցս եղ քաշի՛.
Թող հողը մտնեմ՝ էն վախորը՝
Կանգնի վրես՝ խեղճ, արի:

Զանս կտամ քո գնում
Թե ինձ սպանել չես ուզում¹
Քեզ ինչ արի, որ խռոված՝
Ինձ թողում ես, դու գնում:

¹ [թե] ժեկ

Ինձ թողում են, քեզ տանում,
Գուռն երեսին հետ անում.
Որ բո շվաբն էլ չեմ տեսնի՛,
Էլ ի՞նչ անեմ էս տանում:

Ո՞վ կսպանի ինքն իւան
Մեկ սիրս էլ ա, որ սիրի նրան,
Որ ինձանից քաշվում ես,
Թող՝ քանդվի ախ քյուլ իւան:

Փրփրում ես՝ այ փրփրում
Գետ սիրսս հետգ քրքրում,
Թող՝ աբասունքս մի հատնի,
Հետո մնամ էդ փրփրում:

Մեկ սիրս ոմեմ, քեզ համար
Միշտ մեռած միշտ ցավագար,
Գու էլ որ գեղ չես անում
Ո՞մ տամ ցավիս թիվն, համար:

Ախ՝ ի՞նչ ես էլ թուրդ սրամ,
Հոգիս տախն ես հօ¹ ուզում.
Ջանս որ հատավ, ինձ մեկ ա,
Կրակում ըլիմ, թե սրում:

Ո՞մ ասեմ զարդս՝ որ լսի,
Էլ ցավս սրբի եդ շասի,
Թող սիրսս մենակ խավարի,²
Հասրաթ մնա մեկ լսի:

Սիրտը հանիլ, ո՞չ քաշվիլ
Կըլի ու պահ միշտ մաշվիլ.
Ինչ արի որ ինձանից
Գու էլ սկսար ախ՝ քաշվիլ:

Հոգիս ընձի տուն տվեց,
Որ գու շնս գալ. աշք տվից
Աստված, որ լամ զատն օրս,
Հիմքս քանդից, Յառն տվից:

Ա՞յս մեկ ձորում, շիմանում
Քեզ տեսնեի՝ իմ խանում.
Գու էդ՝ հոգի ինձ տայիր,³
Որ իմ զարդս շիմանում:

¹ [ինքն]² [իմանահար]³ [խանս հանեց]⁴ [իմի]⁵ [անհիր]

Ուզում ես ինձ ախ սիրու տառ,¹
վաղուց մեռավ իմ մուրազս
կը ված ջիգարն ո՞ւմ ա պետք,
Որ հանես նրան՝ իմ սիրու տառ:

Սիրու վառվել² կրակվել էր,
Որ մնացի ա՞խ անտեր
Թե եղ չես գալ գերեզմանս
Էս էբը կըլի, ա՞խ էս էր:

Չանս գուս էկավ, սիրու մնաց,
Նա էլ արնով ա լցված
Եղանականիր, սիրեկան՝
Որ բեղանից սիրու մնաց:

Կոսքը արտին որ դիպավ,
Էլ սաղանալ չի բնավ.
Ին թուրն ինչպես պտի կառեն
Որ սիրելուդ սրտին դիպավ:

Թե վախտ ունես, արի ու տե՛ս
Հալըս, թե ինձ սիրում ես,
Ես որ գնացի, չես հասնիլ,
Ապրում ես, որ ինձ ուստես:

Բ՞զ հաւայրեց քեզ շարի
Բնքը փոխ գնա քո դարի,
Ինձ էսքան ո՞ւր ես էրում,
Բ՞նչ ասեցիր, որ շարի:

Մարավ աղբբի աղբբի ախ ակը.
Մեր կանալ բազի տակը
Միտքդ բեր ու ինձ հիշիր,
Խավարեց աչքիս ակը:

Դու իմ ձեռող կապեցիր,
Սրտիս յարեն կապեցիր,
Ինչ արի քեզ, որ էլ եղ
Սիրու արին կապեցիր:

¹ [էլ ինչ մնաց ո՛վ] սիրու տառ

² [մարվելել]

Աշքս տուլիս ա սկին,
Վայ իմ գլխին, արեին.
Դու էլ Հոգիս առել ես,
Տալիս ես դեին-սկին:

Ինչ որ ասեն, սիրո մի մնար,
Ցավդ ներս արա, մի սբար.
Մեկ բարեկամ որ ճարես,
Էլ էս լաշումն՝ սիրո մի մնար:

ԱԶԳԱԾԱՆՐ ՄԱՐԴԻ ԽՐ ՄԵՌՈՒՅԵԼՈՒ ՎԱԼԵՏՀ:

1 Մնա՞ք բարով, մնա՞ք անց կացած օրեղու
Մոռացի՞ր՝ աշխարհ՝ քեզ տված ցավերու
Որդի՞ք, ընտանի՞ք, ո՞ւր եք դուք լալիս,
Մարմինս թե փիթի, սիրե ձեզ հոգիս:

Էս ճամփեն մեկ օր պետք է մենք գնանք:
Մահով էն կենքին հասնինք, զինջանանք:
Թայց մեռնել ես որ շուտ ուղում չէի.
Պետքը դամ ազգիս՝ ախ՝ ասում էի:

Թայց ո՞ւր իմ մուրազն՝ որ սիրտս էրում էր,
10 Տանջում, ինձ մաշում, ա՞խ՝ ցերեկ զիշերու
Թե իմ աշխարքիս ջանս զուրբան տայի,
Որ հողի տակին՝ օ՞ֆ—պետք է փիթի:

Աշխարքիս ո՞չ փառքն, ոչ էն մեծություն
Ես շեմ ափսոսում, որ մնացի մազրուն
Թայց ի՞նչպես փակեմ աշքս ու ա՞խ շքաշեմ,
Որ հաղար մտքեր հողն պետք է տանեմ:

Ո՞չ երկար ապրելն էր իմ ուղածը,
Ո՞չ լավ օր քաշելն՝ ա՞խ՝ իմ խնդրածը:
Իմ էն քաշած շունչն էլ մահ էր աշքիս,
20 Երբ չէի կարում պետքը դալ ազգիս:

Իշխանություն թե, կամ փառք ուղեցի,
Թազի, պսակի թե փափագեցի,
Էտուր հոմար միայն, որ հաղար մարդի
Աշքի արտասովն սրբեմ, որ ցցավի:

Էկե՞ք հողիս վրա՝ հոգիս հիշեցե՞ք
Իմ ազիզ որդիք՝ ձեր հօրն օրհնեցե՞ք:
Լեզուս որ լովի, իմ հողն ձեզ կասի,
Թե երկնքումն է՛ս ինձ կտանջի:

Փա՛կ էր աշխարհն, սկ' իմ քաշած օրն,
 30 Որ ձեռս չհասավ, ինչ ուզեց սիրտս որս
 Արարի՛շ իմ տեղ՝ թե մարդ շիմանա,
 իմ աղօթքն¹ է՛ս էր, քեզ լավ հայտնի ա:

Մարդի՛ք, ա՛յս մարդիք՝ դուք ե՛րբ կարթնիք,
 Որ սիրս սրտի տաք, միմյանց քոմակ ըլիք:
 Իմանաք, մեր դրախտն ու կյանքն հենց է՛ն ա,
 Ով ինչն ազգի ցավը կիմանա:

¹ [L'vov'strob]

ԻՄ ԲԱՐԵԿԱՍՄ ԱՊԱՀՈԱՆ ՎԱՐԴԱԱՅԱՆԻ ՊԱՏԿԵՐԻ
ԱՌԱՋԻՆ:

1841 թվին. Սեպտեմբերի 5-ին:

- 1 Ա՞յս սիրտս լիքը որ ես շատ անգամ
Պատկերիդ աշխա քցում՝ բարեկամ,
Ի՞նչ կրակ է վառվում միջում, ինձ էրում,
Թուր մտնում սիրտին, լերդս կտրատում:
Են ի՞նչ օր էր, որ մեր անմեղ վախտին
Սիրտ սրտի տված մենք ի միասին:
Եղի ինձ պահողն ա՞խ քո սուրբ սերն ա,
Մեկ դոշդ գոշիս հասներ. էն սհաթին
Տանէր Արարիչն աված ամանաթն:—
- 10 Յարար սուրբ հոգիդ բնած ա, թե զարթում,
Յարար որ էրուց տանեն ինձ թարուն,
ին սառն հողին տան, օրս խավարին,
Երկնիդ տակին ձենս էլ քեզ չհասնի.
Այս կդա՞ս էլ ա կանգնես ինձ վրա
Երբ խավար աշխա կարուա քեզ մնա.
Էդ սուրբ բերանովդ՝ հոգիս կը հիշե՞ս,
Թե դու էլ սրտիցդ անունս կզնշես:
Ազի՞զ բարեկամ՝ ա՞խ՝ քո դուռն որ գամ,
Ես էս բոպեին, կանգնեմ, քարանամ:
20 Յարար որ աշքդ բանաս, ինձ տեսնես,
Էլ շունչ շունենամ, որ սիրտս առնես:
Յարար մեկ ախուր աշքով ինձ էլ ա,
Կնայիս, որ հոգիս էն կողմն իմանաս:
Թե էս աշխարքումն ինձ էլ սիրող կար.
Ես էի մենակ՝ մեղավորն ու շար.
Որ ո՞չ քո սերը լավ ճանաչեցի,
Ոչ աստծու տված-կյանքն վայելեցի
Սիրտս ինձ համար կրակ էր դառել,
Աշխարքն ինձ համար վաղուց վերշացել:
30 Ով իր մեռածի հոգին էր լալիս,
Ես իմ սաղ գլխին ծեծում, վայ տալիս:
Մահ էի ուզում, առա, դինչացա,
Քեզ էի ուզում, մեկ օր չտեսաւ
Հոգիս տալիս էլ՝ ես ձեռո՞քել՝

- Քեզ էի կանչում, որ տեսնեմ մեկ էլ:
 Թայց ա՛խ՝ իմ լիրդս շորացած մնաց,
 Հասրաթս քեզանից շառա՝ աշքս բաց:
 Բարեկա՞մ սիրում, սիրուն բարեկամ,
 Ի՞նչ կըլի, որ ա՛խ՝ ես մեկ զուշ գառնամ.
 40 Կանգնեմ երեսիդ, ոու շոմաշ քաշելիս,
 Բանամ իմ սիրոս, որ մեկ ցավս տեսնիս:
 Կաթի երկնային աշքիդ լիան ինձ վրա
 Երգած սիրոտ իր ծովան՝ բերնիդ հովին տա:
 Պարզի էս խավար միտքս՝ որ ինձ մեկ օր
 Ո՛չ մահ է տալիս, ո՛չ կյանքս առնում, որ
 Կորշիմ, ա՛խ՝ պրծնեմ էս դառն աշխարքիցս,
 Կտրվի էս շար շվաքն եղակցու:
 Հոգիս քեզ պահ տամ, ու մարմինս հոգին.
 Որ զու բերես հետդ վերջին ահաթին:
 50 Էն զինումն էլ թե դժոխքն ինձ տանի,
 Քո սուրբ աղոթքը ինձ մեկ ճար անի.
 Թե ես անարժան՝ էն սուրբ Արարչի
 Պատկերն իմ ձեռով՝ ա՛խ՝ խանգարեցի:
 Քո արդար ձենը, քո սուրբ բերանը
 Բալքի ինձ շարա անի էն ատյանը:
 Դու ըիս էլի իմ հոգու փրկիչն,
 Խշպես էս ահաթին դու ես իմ մաշիչն:

ԲԱԶՄԱՂԷՏ ՌԻՍՈՒՑԻՉ:

1 Արագէս յանկամ բարերար իմ
Ընդ Զեզ կոկին՝ զի եղիցիմ՝
Հի լուկոցնմ զմորատս Զեր
Եւ ընդ հովանեաւ Զեր լիցիմ՝

Ո՞վ բազմազէտ իմ բարերար
Ո՞ տացէ ինձ՝ զոր մինչ այս վայր
Ոմեի ես զԶեր հրաման,
Որ էր ինձ միշտ քաղցր շաքար:

Բարերարութեան քոյ արձան
10 Կանգնացի յիս մինչ դուռն մահուան:
Յայնժամ միայն յորժամ մեռից
Մատանիցէ ի գերեզման:

Զիս բախտաւոր համարեցից,
Եթէ երբէք ի կեանս կարից
Հատուցանել զԶեր բարիս
Որոյ յատէ հանգիստ մեռից:

Բանականութիւնս շզօրէ,
Արտասանել զօր ինչ կամէ
Դեռահաս երեխայրինք
20 Շնորհակալ լինիլ կամէ:

ԽԱՂ. ԲԱԺԱՆՎԵԼՈՒ. ՎՐԱ:

1842. օգոստոսի 4. Երեան:

1 Աշխարքումս ո՞վ ա մնացել
Մեկ տեղ, որ մենք էլ՝ ա՞խ՝ մնանք,
Շատն հն չսպես եկել, զնացել,
Մենք էլ պետք է՝ մեկ որ դնանք:¹

Բարեկամի սիրտը՝ դորդ ա,
Զի՞ համբերում չսպես ցավին.
Բայց նա խելքին պետք է մտիկ տա,
Չտանջի, շմաշի նհախ իր հոգին:

էլ էս երկինքն, էս արեգակն՝
10 Ինչ տեղ նստենք ու վեր կենանք.
Պետք է քցեն շողը ու շվարն
Միշտ մեր գլխին, էլ ո՞ւր մենք լանք:

Լացն ու առւրզ թույն են, լեղի,
Հենց կմաշին սիրտ ու հոգի:
Ոչ գնացողին կանեն մեկ ճար,
Ո՞չ մնացողին կգան հավար:

Թե իրիգում, թե առավոտ,
Ուր որ փշի էս քաղցր օգն.
Պետք է հիշենք բարեկամի
20 Ազիզ անունն միշտ մեր միշի:

Շատ դարդ անելով, շատ վշվալով
էլ ո՞ւր կհասնի, որ լավ մտածենք:
Թո՞ղ ընկնենք ճամփա միմյանց աղոթքով,
Որը բարին է, Ասանից խնդրենք:

Շատ էլ որ մնանք ժումկ ծնկի տված:
Ի՞նչ օգուտ, թե վերջն պետք է բաժանվենք:
Սիրտն ըլի մոտիկ, լավ խոսք է ասած,
Հեռանալով հո մենք մոռանալ շենք:

¹ Յուրաքանչյուր տանից Աբովյանը նշել է կը հնել «Աշխարքումս ով... ա մեացել» և այլն.

Սրբեցե՛ք ձեր արտասոռմքք,
 30 Ազի՛ զ ծնողք՝ քա՛ղցը բարեկամք.
 Թո՞ղ սարն առնի ձեր ցավն ու սուրբը.
 Մատքիդ պահե՛ք, մեղ շմոռանաբ:

Թե գնացողի, թե մնացողի
 Ասենք սիրով՝ մնա՛ք բարով.
 Տա՞նք ու առնենք մենք դոչ դոշի
 Վերջի համբույրն անուշ սրտով:

Ինչ սար, ձոր էլ որ մեզ ծածկեն,
 Մեզ իրարից խլեն, զրկեն,
 Թե ալքներս էլ իրար չտեսնի,
 40 Սիրտը մեր սերն հաստատ կպահի:

Առնե՞նք թամեր, տանք ձեռ ձեռի,
 Խմե՞նք ճամփի սալամաթին:
 Դո՞վ ա խարար, թե ո՞ր վախտի
 Մեկ էլ ուստ կգանք մենք էս սհաթին:

Մնա՛ք բարով՝ ազի՛ զ սարեր.
 Կանա՛շ ձորեր, քա՛ղցը դաշտեր.
 Լավ բախտավոր գլուխ պտի,
 Մեկ էլ ետ գա ձեզ ա՞յս տեսնի:

* * *

1842 օգոստոսի 3-ին. Երևան:

1.

1 Ում սիրալը որ տիսուր ըլի,
Թռղ մտնի բազն, քեֆը բացվի,¹

Արեգակը մեր էր մտել,
Լուսինին իր տեղը բաց արել:
Իրիգնահովն թիերի վրա,
Ասող ու լուսին երկնքի վրա:

Զարման խանումի ձեռիցը
Բանած՝ պնացինք մենք տանիցը:
Փեղի կարմռունչն զողողալով

10 Մենք անց կացանք շարշարանքով:

Պողոս ափուն էս հագաղին
Միտք էր քցել իր հին հոգին:
Մեկ ամանով հավող լիքը
Էկել, հասել էր նա դիքը:

Նրան թողինք ու անց կացանք,
Բաղի միշովն եկանք, հասանք
Չորաբաշի գլխի ծերը,
Աչքներու քցեցինք ձորը:

2.

Ա՛յս էն ձորը, ա՛յս էն ձորը,
20 Ո՞ւմ տաեմ ևս նրա շնորթը,²

Զարման խանումն, Շողան քիքիրն,
Պետրին թողած իր միտքն ու ֆիքրն,

¹ Յուրաքանչյուր անից հետո Արովյանը նշել է կրկնել առաջին երկու տոկը՝ «Ուժ սիրալը որ»:

² Հ-ըդ գլխում փախված է կրկներոց, յուրաքանչյուր անից հետո ովետք է կարգաւ ոլլի էն ձորը, ալի էն ձորը:

Զըրից էին տալիս, խնդում,
ես էլ նըրանց հետ ծիծաղում:

Անուշ լուսինն էրծաթի պես
Փայլում, խփում էր իր երես:
Քաղցր հովք, թփերի քովը
Գալիս, գնում, մտնում ծովը:

Սիրտս լիբը կայի նստած՝
30 Ազըս ամպերին, ձորին քցած,
Շորդ ա, ասում, լսում էի,
Թե ինչ էր հալո, ո՞ւմ ասեի:

Զանգվիր էն քաղցր ֆշշշաւը,
Մասի թփի խշշշաւը
Որ չէր ընկնում ականջս, գնում,
Հողիս հետք հանում, տանում:

Մտքումս ասում էի, մաշվում.
Երար կնստիմ էլ էս բազումն:
Ա՞խ' քո ձենք՝ բա՛զցր իմ Զանգի,
40 Ուր գնամ, որ խելքս լտանի:

Երկնրի մուղիկի նըման
Տուտըդ քցած ձորի բերան,
Գնում ես, հասնում զու Արագը,
Տալիս հազարի մուլազը:

Բանդն ու Մամբոին, Աբիհայաթի
Տանում, զրում տուն ու հայաթ:
Մեջը ու բամակ, ծոցդ կանաչ,
Ուր որ նայես, թե ձախս, թե աջ:

Հազար տեսակ պտուղ զանազան
50 Զարդարել են շայիր, շիման:
Քարափներիդ խորդ երեսը
Տեսնելիս՝ մարդ կալնում է երեսն:

Էլի էդ քո անուշ ձենք,
Էդ քո կանաչ ձորն ու շենք
Աշըն առնելիս՝ մայիլ մնում,
Գալիս զրազդ, մոտիդ նստում:

3.

Ախ իմ զանդի, քաղցր իմ զանդի,
Թող՝ սաղ աշխարհն շարըդ տանիւ¹

Լեռ քարերին դալդեդ տալիս,
60 Թարափները սքում են, լալիս,
Անցվորականն ձենդ առնելիս՝
Եղ է նայում, Հոգին տալիս:

Դզրդալով մտնում ես ձորն,
Սասանացնում էր, սար ու խոր.
Քո էն սիպտակ քափի, փրփուրը
Տեսնողի սիրտն քցում է Հուրի

Քո անձման զավակները,
Էն ծառ ու թուփ սիրում թուներդ
Կաթդ ծծում, գլխիդ կանդրած՝
70 Հով են տալիս ճիսկներն փռած:

Ո՞վեր են քեզ տեսեւ, գնացեւ,
Զանդի՝ քո տեսուդ վարելեւ:
Մենք էլ կերթանք, որիշն կզա,
Թաք քո դաշտը դալար մնա:

Միթե էս է՞ն տունն, էն տեղն չի,
Ուր մեծանում իշխանազդի
Ազիմի զավակը Աղամալյան
Լինեին քեզ Հովիմ, պաշտպան:

Ա՞ն՝ ո՞ւր էն փառքն, էն մեծություն,
80 էն վեհանձին իշխանություն.
Միթե՝ էն տիսուր, տրտում մասուն
Սահակ աղին՝ ա՞խ պահե լուռ:

Զանդի՝ սքաս, Զանդի ովքաս,
Իմ արտասունքն էլ առ, ու Հա՛ս.
Աշխարքի տված վարելզություն
Կորչի ինչպես քո շուրբ սիրուն,

¹ Յ. Պ. Պ զինուած յուրաքանչյուր անից հետո կնկներդն է՝ «Ա»ի իմ Զանդի քաղցր իմ Զանդի...»:

Եատ աշք պտի, մեկ էլ տեսնի
Քեզ ու քո սերն մեկ էլ առնի

Զեզ ի սիրոյ մնասցէ՛ նշան...
90 Իմ զրօսանաց սակաւ այս բան:
Եւ ի վայրս օտարութեան
Միշտ պաշտեցից զսուրը Հայաստան:

- 1 Զարթնուք ի միտս իմ կրկին կենդանի
Պատկերք սխրալի անցեալ իմ առուրց
Ո՞հ յուամմէ՝ առից զվշտահար սրտի
իղձ, կարօտութիւն նեղեալս ի ցաւոց:
- Քակտին իմ ոսկերք ի սուզմ դառնութեան,
Աւազ հառաջանք մաշեն զիմ աղիս,
Այլ կողմն տարածիգ ոչ բերէ զիմ ձայն
Ո՞չ տայ ինձ լսել զանոյշ ձեր բարբառ:
- Ի վայրս ծննդեան ի ծոց հայրենիաց
10 Թափառիմ անյոյս, անճար, անմիջիթար.
Թէև փառարին իմ կեանք իսղճալի
Զի՞ք ոք՝ որ լիցի սրտառուշ ինձ աստ:
- Երբ գրկախառնեալ ընդ ձեզ միւս անգամ
Փշեսցի ինձ շունչ ձեր կենդանարար
Թող անդ իմ հոգի ելցէ ի փոշոյին
Որոյ վերջին վճիռն է դառնալ ի հող:
- Դարան է աշխարհս ցաւոց և վշտաց
Մինչ սիրոն զգայուն¹ զրկեալ; ի դիմաց
Սիրելեաց՝ որ ի նմա եղեն համակից:
20 Վարանի յետոյ ի միայնութեան:

1 Բնագրությ զգացուն:

ԱՂԵՐՄ ԱՌ ՄՈՒՍԱՅՆ:

(Ի դիմա ճայտենեաց:)

- 1 *Տեսեալ՝ քո թոիշ վեհ, երկնապարիկ*
ի թևա թեթև ամպոց ձիւնափայլ,
Մուսա՛յը իմ գողարիկ՝ ոսկի շնաշխառուկիկ.
Կարօս իմ հոգի զբա՛ խանգաղասոհալ:
- ii
- ի շքնաղ հովիտս քոյդ բուրաստանի,*
Յերիխներանգ պարտէզս քոյդ զրօնարանի,
ի բոյլս սոխակաց՝ զքեղ օրէներգուաց,
ի ճախր օդաւալաց՝ վեհանձն արծուեաց,
ի. ծոցըս բարձանց առ քեղ ամպարարձ,¹
- 10 *ի խոր ծովուց քեզ բերանաբաց,*
ի խումբս կանառաց հօր դիւցազանց,
Որբ զբոյդ կնդրուկ աստին ծխեցին,
Որբ զանոյշ քոյ խունկ աստին բուրեցին,
Զբոյ նազիլի գեղ գեղգեղեցին.
Զանգին գոհարս քոյ մթերեցին,
Զբոյ բալասամ աստ ծովացուցին,
Զբոյ կենասառու զինու վառեցան,
ի գաշտս լայնարձակս՝ անվորով, անխոռով՝
Հեռի ի բարքեր խորշակաց տօթոյ.
- 20 *Բերկրեալ, ուռմացեալ երկնային ցողով*
ի բերրի, յուռիթ վայրս օդապարեալ.
Բոլորեալ, պատեալ եղեմեան հոտով,
ի ներբոյ ծառոյն խնկոյ անթառամ՝
Ոսկեհուռ պտղովը, գոհարեայ ծաղկամբ՝
Առ աղբերբը, գետովը՝ լի անմահութեամբ՝
Խշտի նոցա վարդ սփոռեալ, տարածեալ.
Փափուկ նոցա բարձ շուշան պատառեալ.
Շունչը նոցա յափրեալ, հոտովը պարարեալ:
ի գիրկս նորա լայն՝ նռնահատ խնձոր
- 30 *ի ձեռս նոցա ձիգ՝ ոսկեձոյլ բռսոր.*
ի մէջս նոցա կուռ՝ գոտի ոսկեհուռ.
ի գլուխս պերճ՝ պսակ դարնեայ նոր.
Զեղիսեալ բարովիեամբդ՝ արբեալ զբո շնորհ.

¹ [ամպամբարձ]

² [Որբ] քոյ անզին գոհարս մթերեցին

Բազմից ի շգրիչ հանգստեան հոգւոյ,
 Բազմից ի դրաւել փառս անցովկ շքոյ.
 Բազմից ստանձել պասկ առօրնալ.
 Քոյդ անուամբ զճումն իւրեանց տօննցին,
 Քոյդ քնքուշ թևովք զբրտումն սրբեցին,
 Քոյդ մատամբ ամոռ՝ զիւրեանց իղձ առին:
40 Եւ ե՛ս զիմ խոնարհ զիւսի ամբառնամ
 Ի ձորոյ փշոց՝ խոր քնոյ, և լամ.
 Կոշկոնձեալ ի լերդա սեպ ապառաժից,
 Կաշկանդեալ ի գուգը աղի աղէտից.
 Մաշեալ զիմ զլուի ի սրասլաք վիմաց,¹
 Բնկեալ զոսս և զձեսս յուժգնահար բռանց,
 Դիզեալ, խորովնալ ի տապակ անշէջ.
 Մոլորնալ, վանեալ յանհարի ել և էջ.
 Շուարեալ առ շրիմբը՝ անկուշտ անդնդոց.
 Մերձ սահիլ յալեաց յորձանս կուտելոց.
50 Ի նետէ վարեալ արտուտս վտարանզի.
 Պատեալ, պաշարեալ յանձուկս թակարդի,
 Փշրեալ զբնար տաւլի խնդութեան,
 Խզեալ վերջին լար կծնացս զօրովնեան,
 Առ քե՛զ զիմ բնկեալ բազուկս կարկառեմ,
 Զիմ գլուխ շախշախսեալ՝ թեղ բանամ, հայցեմ
 Լալագին աշօթ՝ ձեռն ի ծնօտի.
 Զիմ շանթախորվ սիրս բանամ աստիւ
 Հե՛ղ կամ բաշասամ քո կենդանարար.
 Տո՛ւր կամ քոյ խոր քում քաղցրերադ, անճառ
60 Բա՛րձ կամ զիս սասի, բա՛րձ, տա՛ր զիս իսպառ
 Շի՛զ եղէց ոտիցկ՝ ընդ քեղ ճախրեցալոց.
 Բո՛յս եղէց ոտիցդ, ուր և կոխեսցիս.
 Փոշի ներբանացդ, ուր և հանդիցես,
 Զէ՛ իմ կամք՝ թէ զու զիս պսակեսցիս.
 Զէ՛ թէ զու զինեւ ըզգոտի արկցնս,
 Ո՛չ թեամբարձ զեղող, ինկ բնոնեսցես:
 Եփեա՛ մեղմիկ թեղ յիմ դէմս անկենդան.
 Քո մահ՝ ինձ անմահ կեանք² հրանական.
 Քո ոտնահարուսած ինձ՝ կայժ զօրովթեան:
70 Զի՛ք իմ յոյս ալլա՞ զիմ նաւակ վարել,
 Բաց իմ առաջի տարտարոս անել:
 Ա՛ռ զիմ այս վերջին՝ շնչոյ պատարագ.
 Զերմին սիրոյ պտուղ, հոգոյ երկնառաք,
 Կամ առ՛որ ինձ յայս ձոր՝ վա՛յր իջեանի,
 Կամ բա՛րձ զիշեան իմ բնեկ, հոստի,

¹ բարտեց
² {բայ}

³ {յուկ <տեան>}

- Դաշտք Հայաստանի ի բերս յուրիթի, լի,
 Սիրաք Հայկազանց գեռ ի վէրս նողկալի,
 Մոցք Արարատայ մթերեալ գանձիք,
 Արամեան որդիք՝ ժիրք և շնորհաշութ,
 80 Մասիս մեր՝ հզօր, խորխոտ, ամպագորհ,
 Միտք Արշակուննացս վսեմ, բարձրախորհ.
 Մտինք Թորդոմայ Կասպից և Սեաւ ծով
 Պատին՝ սկարպատեալ կաթամը կենագործ.
 Զեռք¹ Ասքանազեան ազգ մեր մեծագործ.
 Քաջայաղթ բազկաւ՝ բուռն և մեծագործ.
 Կամի՛ առաքել, ամբառնալ ի վեր
 Զօրհնութեան պտուզ, զմաղթանացս նուէր
 Կամի՛ լուսատու, երկնային արբայն
 Մագել զճառագլթս ի ձորս մեր անձայն.
 90 Հանել զբիկազգի բերս և զարմատիս.
 Տալ փնչել մեզ այժմ ծաղկանցս դրախտիս,
 Ուր ցնծայրն երբեմն նախահայրն՝ անտխուր.
 Պսակել, պատուել զգագաթն այն հզօր
 Ասկեայ պատկաւ, ուր էրն նոյեան ձորս

 Այլ ժանր գոլորշիք մերոյն այս գնդի
 Նեխեալ ի բարձունս նիւթովք զազրալի
 Պատեալ՝ գօտէ զմեօք թանձրութեամբ սեղմեալ.
 Պատան երկաթեայ յանձն մեր մածեալ.
 Հուր, ծծումբ խցկէ ի ներբս ի շնչելն.
 100 Աւա՛ղ՝ սոյն ոսկը ժանդ՝ թոյն ի բարբառելն.
 Բոնցկէ, թափէ յորովայն մեր խորս
 Շոնչ իւր մըրկեալ յիլ, մուսս դառն սրտին.
 Իրը նոյնայ գի՞՞ գրգռայ փորոտին:

 Եփեա՛ իմ Մուսա՛յ թեռվք քով հեղիկ,
 Թո՛ղ՝ ժանդ այս մթեր ամպոց թանձրաձիդ
 Խոնեացի՛ ի մի կոհակ, յոյզ մրրիկ.
 Թափեացէ՛ զիւր շանթ՝ ժանդն կայժակնահըռու.
 Պարզեացի՛ պատկեր երկնից՝ շնորհալոյս
 Մեր շերմ արեգակ զիւր շողս սփռեացէ՛,
 110 Մեր սուրբ դաշտորայք զկնդրովս խնկեացէ՛
 Առ մե՛ր լուսատու Արքայ մեծագօր,
 Առ մե՛ր Հայր գթած, բարի և հզօր.
 Կնդրուկ սրբութեան սիրոյ սուրբ սրտից,
 Կնդրուկ անուշից, զոհ ողջակիզաց,
 Արդար սեղանոյ նոյեան սուրբ դաշտաց,
 Նոյեան վեհ որդոց, նոյեան զաւակաց,

¹ [Ճիռ]

Զի և Հղօրն վերին՝ քաղցրաւնիշ աշօք
 Յերկնից խոնարհեալ՝ տարածեալ բավկօք,
 Մերն ընկալցի՝ անդ ուխտի պատարագ,
 120 Զոր սիրաք սիրանուէրը խնկեն յիւր ազար:
 Օրհնեացէ՛ շրթամբք հայրականն սիրոյ՝
 Աճիլ, զարգանալ որդոցս իւր ծոցոյ:
 Զմեր մայր, զտէր, մեր պաշտպան փրկիչ
 Զնո՞ր մեր այս նոյ տօնել խնդախց.
 Տօնել, տօնախմբել և նաւակատել,
 Երգել, փառատրել զմուտ նորա և զել,
 Զմեր սիրտ, հոգի նմա զո՞ն մատնել,
 Եւ զմեզ ընդ նորայն արծուի թևովը
 Ի լար թշնամեաց պահել, պահուանել

ՄՏԱՆՄՈՒՆՔ Ի ՏԵՍԻ ՀԱՅՐԵՆԵԱՅ:

[Ձօրուրիւն ժամանակին (ի դէմս հայրենեաց)]

- 1 Թուն ժամանակին բարձեալ դիւր կռան՝
Անխիղը խստութեամբ՝ ի ձեռին զմահակ՝
Մանրէ՛, ջախչախէ՛ ի սուղ այս վայրկեան
Ջփափուկ երեսաց երկիր փշացանկ:
Կրկէ՛սք, ամբարտակը, բրգունք հաստարմատք
Վերին մատին կամ, ձեռագործք մարդկան
Բարձունք երկնահրոսք, լերինք երկնագագաթք
Ի շանթ նորա դառն սուզանին անձայն:
Դարք, ամաց հողով ի նորա ճիրան՝
- 10 Զերթ սուզէ նրբին անցուկ, վազանցուկ
Ճնշե՛ն, խորտակին յանդունդս շըութեան
Բիւր զամաց վաստակ զերթ խոփւ անշուք:
Մանդաղ նորա սուր, հեղեղ նորա խեռ
Հարեալ և մանրեալ ի յուժդին գրո՞ց
Խզեն, տապալեն ի հորձանս եռ
Դառնաթոր քրտանց ճիկն նորագոյ:

Գիւցադանց կաթիլ արեան երկնընծայ՝
Քաջակուռ բազկաց կրկէս, ախոյեան՝
Ի թափ նորա սուր ջնշին անխնայ,
20 Անհետ շքացեալ վայրէս յանմնայ:

Ազգաց՝ քաջապանծ հսկայից կաճառք,
Զաւակը, զարմք, ժառանգք ի մոխիր ցնդեալ՝
Յանսանձ նորա մրրիկ մատնեալ ի յաւար՝
Վայրկենին սրոյ կեր լիցին՝ վատնեալ:

Դո՞ւ միայն տածես նազկիւ մատամբ
Ի քոյդ գիրկ քնքուշ, ի քոյդ ծոց փափիկիկ
Փնշեալ, բոլորեալ հողածնոյն քրտամբ
Զանզօր ճիռ չնշին՝ Մուսայդ իմ գոզտրիկ:

Ջի՞նչ այս ձորավայր, այս սուզ կենաց լար.
 30 Մթին, գառնաբնակ, խողուն, զիրաբեկ.
 Թէ քո սուրբ շնչոյ զեփիւռ կենասրար
 Օչ գորովեսցէ դժաղկունս¹ մահաներիւ

Անդ մոլին ստամբակ, անդ ճիւաղն թշուսուն
 Ի մի գետնախշտի, ի մի չքաղաքան²
 Սէգ ընդ առաքինույն փոշւոյն բարերար
 Յոխորում՝ զիւր մեղկ դի մեկնէրն մեծաձայն:

Ո՛չ այլ՝ սուրբ սրտայց, ո՛չ այլ՝ բարույն կայծ
 Կառէրն սառն հոգի հողածնոյս թափուր,
 Սիրոյն սըրութեան վերինն այն նախանձ
 40 Ի կմախ մեր շգոյ վաղուց շիշանիւր:

Ո՛չ այլ՝ պերճ հսկայն խլէր զդարնին.
 Ո՛չ այլ՝ ազգաշէնք Հայրենեաց ի պսակ,
 Ո՛չ այլ ի սատար անզօր նմանակցին
 Զերմ առաքինին հիւսէրն զվաստակ:

Յահի սասանման, յալիս մշտածուփ՝
 Ի մուայլ մթութեան ձորոյս մրրկայուզ՝
 Երերեալ, վանեալ յանել ի մի զուր՝
 Փշորեալ խորտակիւր նաւակ մեր՝ անյոյս:

Գու՛ հանես ի վեր ի խումբս երջանկաց՝
 50 Քո՛ սաւառնեալ զինս՝ երկրիս յերկնանջատ
 Բառնաս՝ կուսեզնդ՝ աստէն ամպաբարձ²
 Ի վերայ թիկանց՝ զորդիս կենսահատ:

Թէ բրգունք զիւրեանց հիմնադիրս ի տես՝
 Թէ թերթ ինչ չքոտի զիւր ստեղծողին գործ՝
 Թէ արձանք լոինք դնեն զայն յասպարէկ՝
 Յնտնորդացս ի փոյթ թողեալ և ի ցոյց:

Քո՛ է այս նախանձ՝ դուսար երկնալին,
 Գգուել, պատկել գագաթն այն արդար.
 Որ յիւր թոյլ զանդուած աստ սիրով զերմին
 60 Պահեաց մշտակայծ զայս հուր երկնալառ:

Ի ք զիրկս հրճուին այժմ և իմ նախնիք.
 Զքն խանդապատին ի պարս լուսամփոփ՝
 Հայկազանց հսկայր, հոօր պատանիք
 Քե պարայտեն յերկինս հողեսփոփ:

¹ [Զծաղկունք ոչ գորովեսցէ]

² Բնագըռում՝ ամպամբարձ

- Երկիր այս ապահով ո՞չ կարաց զնոցա,
Արդիւնս շնորհարեր, զեռանդն նախանձ
Պահէլ աշխարհի ի ցոյց յարամեայ,
Ի շուր, ի պարծահու ազգի, Հայրենեաց:
- Ի փշուր խշուր դնին մամուապատ՝
70 Երկրասաստ բազկաց տաճարը և քաղաքը.
Բու ամբակի, տիտուր անապատ
Միայն հեռանշմար գան ի մեր տղաբ:
Հեղեղ երկնածուի՝ ո՞՛ անդնդասոյդ
Լափեալ զամենայն ալեօք կատաղի
Ետ վարիլ ի սուր, ի հուր, ի կորոյս
Զորդիս Արամեան յերկրի երերի:
- Նա տիտուր ի հեռուստ ողբայ զհայրենիս.
Նա աստ ի մօստ յառեալ տարակոյս՝
Զեռն ի ծնօտի նստեալ լալիաց յաղիս
80 Կոծէ, հառաշէ: «Աւամ՝ զ՝ աշաց լոյս՝
- «Հի՞մ ոչ խաւարիր, զմէ՝ տեսանէք
Զհայրենեաց աշխարհ, զնախենեաց սուրբ կայան.
Պանծալի երբեմն, վսիմ, պերճասէդ.
Բաղեալ ի փոշի զարդիս յափտեանն:
- Նա յիւր սուրբ Մասիս յապշեալ կաթողին.
Նա յիւր հին Երասիս հայեցեալ ցաւօք.
Ճոճէ զգուխն շուար հառաշեալ խորին:
«Աստ հանդեալ տապանն, աստ էր դրախտն ամոր:
- Կանգնի, Հրոսայ յերկին՝ ամպարզեստ
90 Աղու ծերունին յալիս ձինափայլ:
Երթայ, անցանէ սուրբ գետն այն համեստ՝
Տիտուր, անմառնէ զիւր նուազ շունչ հատեալ:
- Աստէն գերեցան ընտիր մեր ազգաց
Սերունդը դիցազունք, զաւակիր քաջայալթը:
Աստէն ի յոլորտս, ի սպաս օտարաց
Ցիր և ցան բարձան, յանուրս կաշկանդեալը:
- Վատնեալ վերջին զմիզն՝ անզօր, թոյլ բազկին,
Հեղեալ զսուրբ արիւն յանոյշ պատարագ
Վերնոյն: Փակեալ զաշ՝ թողին ցաւագին
100 Զիւրեանց սուրբ աշխարհ, թշնամոյն ճարագ:
- Ի ծով, ի հորձանս մատնեալ զանձն՝ և ի մահ,
Ի դաշտս, անապատս զիմեալ ողբալով՝
Ի հիւսիս, հարաւ, յելս՝ և ի մուսս ի սահ
Ականն արես՝ զհանգիստ ինդրելով:

Առին զվերշինն միայն ի պաշտար ինքեանց՝
Յուղիս տարածելու, յաշխարհու դեռ անկոխս՝
Իբր կապ սիրոյ սրտից հնուակաց՝
Զիւրեանց սուրբ հաւատ, լեզու փարթամ, Հովս:

Դարուց անդ ի դարս միշտ կարօտամաշ՝
110 Դիմեն այժմ ի ծոց լընտղն Հայրենեաց՝
Բայց խորդ, օտար ծնողն, խորդ և որդիք այս,
Զայն տարածնչին, բարրառ խառնիմաց:

Ո՞ւ ծնողն զիւր որդիս, ո՞ւ որդիք զծնող,
Ծանաչն զմիմեանս յայս նորեկ մողով.
Սիրտք նոցա խնդրեն փարիլ ոզգախոռն,
Այլ գէմք, լեզու նոր՝ խրանին խուսելով:

Քե՞զ է միայն հնապ սիրով կրկնարծարծ՝
Անդրէն ի մի սիրոս, ի մի միտս, մի ձայն՝
Ամոք ողոքմամբ, քնքուշ խնամով
120 Զօդել զնասա պինդ՝ Մուսա՛յդ գողտրական:

Ջի՞նչ մարտոր, ամբիծ, կամ զի՞նչ բարձրագահ.
Աստ, թէ անդ յաշխարհն բացակայ անյայտ,
Քան հող Հայրենեաց, քան մեղմ, հանգարտ մահ,
Որ զուկը ընդ ուկերս ազգին կապէ աստ:

Այս բաղումէ հզօր՝ որ զմեղ տածէ,
Այս հողմ զուարթարար ի հիւստեան ծոցոյ,
Փրկեացէ՛ ամուր, հարցէ՛, մեղմեացէ՛
Զայն շերժ հրաբորոր խորշակ հարաւոյ:

Մրբոյն Ռուսիոյ զաւակը քաշաջան
130 Կրկին կանգնեացն զմէր քակ աւերակ:
Արծուոյն հիւսիսոյ ընդ թիօք տիրական
Կրկին զօրասցուք որդիքս հարազատք:

Հա՛ն զմեր շերմին ի սրտի խորոց՝
Հա՛ն զաղերս մարտոր՝ գոհութիւն արդար
Յերկինս առ նախնիս, ի խումբս սրբոց,
Յերկիրի առ մեր Հայր՝ Մուսա՛յդ սիրածնար:

ԱՌ ՀԱՆԴԻՍ ԱԽԽԱՏԻ Ի ՍՈՒԲԲ ԼԵԱԾՆ
ՄԹԱՅ-ԾՄԻՆԴԱՅ: Ի 1842.

1 Արեգին աշք լուսածաւալ
Չէ էին զեռ բացեալ զթերթս՝
Մինչ զեփիւսին հողմտհարեալ,
Թիսսըզէր ի դաշտս՝ անհետ:

Տարափը Հեգիկ՝ զիշերային
Գեռ տեղալին վերուստ ի վայր.
Գեռ Մօրֆէ յիւր թևս՝ մնզմովին այ
Սբովէր զլեառն և զքարաժայու

Մինչ Մթայ-Մմինդայ յիւր տխուր ծոց
10 Հանէր, տանէր զազօթարարս
Յովստ, ի մաղթանս՝ կարօտ հոգւոց՝
Սբովն Գալիլի ի հեզ տաճար:

Գոեհք, փողոցը կենդանացեալ՝
Յովստաւորաց սրտանուէր.
Որը գունդապունդ զերամ կազմեալ,
Դիմեն ի լեռուն անդ զառ ի վեր:

Աստ օրիօրդք, նորահարսունք
Պանեալ ի զարդ հանդիսական.
Անդ պատանիք, ծէրք և մանկունք
20 Թես առեալ՝ շուեն խնդաձայն:

Ի ձիւնափայլ հանդէրձս՝ կանայք
Մարգարտահիւս, սսկեճամուկ.
Ի զարդս, ի զգեստս անդ երփներանդ՝
Մեզմաշարժ ձդին ի ձորն անձուկ:

Աստ ի նժոյդ օդասլաց՝
Պատանին բաշ զինադարդնալ՝
Անդ յամեհի խոզս կառաց
Զոկ ընտանեաց՝ զուսոզ բազմեալ:

ա) Մօրֆէ էր շոստուածունէր քնոյ : Զե [չէ]

Ամենեցուն աշք հիսոաբննին
 30 Յայս տեսարան միսեալ անկուշո,
 Ոմն գողանայր զիւր փարելին,
 Ոմն ընծայէր ի տես զիւր շուրբ:

Ի շող՝ պայծառ միջօրէին,
 'Ի նսեմ ստուեր երթկոյին.
 Բիւրակերպեան այս պատկեր անդ
 Փոփոխ առ փոխ շարժի մեղմին:

Աստ ի հովիտս հայր ընտանեաց,
 Անդ յարտևանս խոմք խաղարկուաց.
 Ոմն բազմեալ՝ խրախճանայ,
 40 Ոմն արշաւէ, երգէ, ցնծայ:

Աստ պատանին սիրաբորբոք,
 Յիւրըն յապշի կոյս սրբասուն.
 Անդ օրիօրդն, կամ հարսն ամոք,
 Ի փեսայն իւր զմայլի՝ սիրուն:

Զայն քնարաց,¹ փողոյ, նուապի.
 Ի դաշտս, ի ձորս գեղգեղելով,
 Զանցաւրաց սիրտ, լսելի
 Պարարէ քաղցր առ անոյշ հով,

Երշանիկ նա, որոյ աղերս
 50 Էառ զկատար, լցաւ փափագ.
 Բայց քանեաց² իղձ մնաց անտես,
 Ի լոին սիրտն անքակ և փակ:

Երանեմ զձեր վիճակ անմեղ՝
 Արդա՛ր որդիքոյ քնութեան.
 Պարզ այս ձեր ուստ լիցի ձեղ դեղ,
 Առիթ յուսոյ և միրկութեան:

Բայց որոյ սիրտ՝ ա՞ն վարակեալ
 Ի ծուփս անզուսպ կրից, հոգոց.
 Մնայ յաղմուկս ալեկոծեալ,
 60 Ի վարանմունս անքոյժ ցաւոց:

¹ [հուապի] քնարիկ

Յայս տեսարան հոգեզուարճ
Յապշեալ՝ նստիմ ձեռն ի ծնուաի.
Զբեղ խնդրեմ վշտահալած,
Զբեղ իմ կենաց լո՛յս անձկալի:

Արձանացի՛ր ինձ յանդիման՝
Պատկե՛ր լուսոյ ինձ կենսատու.
Թո՞ւ սա լիցի վերջին վայրկեան,
Միայն՝ մեռայց ի գիրկս քո:

ԿԱՐՕՏՈՒԹԻՒՆՆ ԱՌ ՍԻԲԵԼԻՆ:

1.

1 Վառեալ ի սէր քոյ այրիմ, բորբոքիմ.
Թխապամած թառալ ի մաշեալ սիրտ իմ
Դիզացեալ՝ ցնդին ընդ օդս՝ հողմավար,
Այլ հոգիս՝ ա՛խ մնայ միշտ անշէշ, միշտ վառ:

Ցիշել քեղ բանիւ, զոր զգամս ցաւօք,
Ե՛րբ իմ լեզու՝ ո՞չ, բաւէ՝ հրաբորոք.
Քեզ սիրտ իմ զանբոյժ կամէի բանալ.
Զբոյն զբաւել, զիմն աստ Քեզ զոհ տալ:
Կամիս, քեզ իմ կեանք պատրաստ են ի մահ,
10 Չի՛ք ինչ որ ի սփոփ տայցէ ինձ աշխարհ.
Ա՛ռ զոր զիմն շուտով, ա՛ռ, թո՛ղ, ես կորայց,
Միայն քո շունչ ինձ լիցի, գեղ կենաց:
Ի մութս գիշեր¹ դիմեմ ի խոր ձորն.
Զիս շրջապատեն լերինք խորդագէմք.
Ազրիւր խոխոչան ի ձայն տիրալուր,
Վկայք արտասուացս, զորս ամփոփեն վէմք.
Ընդ քե՞զ յայս ատեան, ի ժամ լոռութեան,
Ընդ քեզ ձեռն ի ձեռն, ընդ քեզ գիրկ ընդ գիրկ,
Կամէի շնչել՝ հոգույս սիրեկան,
20 Ի հով գեֆիւուին, ի ցողն այն մեղմիկ,

Գուցէ երկնային շողն անմեղ քնոյ
Տարածի ի դէմս սիրելույդ իմոյ.
Հոգի քո հանդարտ անոյշ երազով
Ճմայլի մինչ իմն աստ մորմոքի ցաւով:

Ի 11 Ժայիսի. 1842 ամի:

2

1 Առ զիմ հոգի՝ իմ սիրելի.
Ա՛ռ, ազատեա՛ ի տանշանացս,
Որք զիս հաշեն աստ յաշխարհի,
Առ, արձակեա՛ ի կապանացս

¹ [գիշերոյն]

Միթէ ծաղիկ գարնանայնովն
Կարէ” պահել զիւր թարմութիւն.
Առանց ցօղոյ առաւօտուն,
Առանց շնչոյ զեփիւոին իւրն:

Թէ քեզ թառալը իմ ոչ ազդեն.
10 Թէ ծխամած այս կրից բոց
Ի Քո սիրտ սառն ո՛չ ներգործին,
Զի՞նչ այլ ևս ինձ կեալ գառնակոծ:

Ո՛չ մթին այն գնդան խորին
Տայ սոսկալ ինձ ի յելս իմ.
Զորկ ի սիրոյդ կոխել զգետինն՝
Այս հուր անչէջ՝ է, յոր մաշիմ:
20 Ճաւոց իմս ոչ՝ ա՞խ՝ դճդ լիցի:—

Քո՞ շունչ անմեղ, Հոգի արդար,
Քո երկնատիպ դիմաց գեղ¹ վառ
Փակեալ յինչն, կհանը և աշխարհ՝
Լինիցին ինձ դժոխք խաւար:—

Սաւառնացի՛ր յերկնասլաց.
Եփել թևովք զիս կործանեալս.
Սաւառնացի՛ր, լոյս իմ աշաց,
Մինչդեռ շնչեմս կենսահատեալս: —

ՄԵՆԱՍՏԱՆ ՍՈՒՐՅ ԳԵՂԱՐԴԱՅ ՎԱՆԻՑ:

Ի 1842. ի 24-ը Յունիսի:

ԵՐԳ ԱՌԱՋԻՆ.

1 Ի լոին ձոր միայնութեան
Կանգնիս՝ դու հի՞ն աւուրց արձան.
Գեղեցկաբան ճարտար լեզուաւ
Դու զբոյդ ճառես շուք անվախճան:

Ժամանակին բուռն մահազէն
Սարսեալ մխիլ՝ ի քո սուրբ շէն.
Հազարաւոր ամաց, դարուց
Սպառնալով՝ կաս դու արդէն:

Թեզ բնութիւնն՝ ամրակառոյց
10 Եդ զայս պատուար վեհ, անմատոյց,
Հողեղինին ի սաստ, ի հրաշ՝
Պահել յապայն հաստատ՝ ի ցոյց:

Սքանչելի քո սուրբ տաճար
Հմուտ ձեռին գործ այս ճարտար,
Ի ճակատու իւրում դրոշմէ
Հայկայն որդուց զնախնի փառս:
Մահակ ի ձեռն ժպիրհ հողածինն
Եմուտ ի կործ անսիրտ ժայփին.
Երկաթեայ նա իւրով գրշաւ
20 Կամէր կերտել կոթող՝ անձին:

Մի՛ Հռովմայն շբնաղ տաճարք.
Յունաստանին թատրոնք, պատուարք.
Մի՛ պանծասցին յոխորտաբան՝
Ի պերճ իւրեանց գլուխ բռնահար:

Անդ աւերակք միայն քարոզ
Գործավարնն անզօրութեան
Աստ կենդանի, աստ երկնահրոս
Դեռ կայ խորանն արրովթեան,

Նոքա վաղուց կեր պատրաստեալ
 30 Ժամանակին անկուշտ ժանեաց.
 Մա յիւր գմբէթ լուսածայրեալ՝
 Դեռ ընդունէ, զնորայն թափանց,

Ասանեցան ապառաժք, վէճ
 Ի ձայն անձայն բիրտն երկաթոյ.
 Զի աստ վերնոյն ահաւոր դէճ
 Ի շինողին փայլէր սիրոյ:

Անզգայ հետաղն հոգեվառեալ՝
 Յերկնաւորին հուր սրբութեան,
 Քարանձափն՝ թափուր նստեալ՝
 40 Ես նոր հոգի կենդանական:

Յանդուգն բռամբ նա ջախջախեալ
 Ջգագամթ վիմին հզօրակուռ.
 Ըզ որովայնն ամուկ՝ բանեալ,
 Տալ սրբութեան պտուզ և տուր:

Աստ, ուր երբեմն հողմն կատաղի
 Ի թափ իւր բուռն որոտայր ժանդ,
 Վերնոյն անուն օրհնաբանի
 Այժմ ի մաքուր շրթանց՝ մարմանդ:

Աստ, ուր երբեմն ծերապ և խոռոշ
 50 Հեծեծէին բարձրահառաշ.
 Ի մոռնէ վայրի, գաղանագոչ,
 Ամժմ ազօթից խնկի¹ թառաշ:
 Անդ ի կատար ապառաժին
 Կրթեալ² անմռունչ՝ վեհ արծուին.
 Սարսի ի սլաց երկնախմբին
 Պարառելոյ աստ սիրագին:

Ակրիւր վճիւր յերկնափող նուադ
 Կարկաշելով աստ զառ ի վայր,
 Ի ձիւնափայլ դէզս փրսիրապսակ
 60 Խլեն զտեսիր, լուր և բարբառ
 Անդ խորդագէմ, ամպախիզախ՝
 Քարաժայրին ամբարձեալ զծագ՝
 Վանէ անձեռն՝ յիւր վիհ և վախ
 Ժպիր հետամորին զակնագիտակ:

¹ [ծիւ<հալ>]

² [Լաս<հալ>]

Գառնի գետոյն որբառձայն՝
Թնդամբ սահեալ ի ձորաժէջն՝
Ի քայլահոսս վիմակործան՝
Կոծ արկանէ յիւր ել և էջ:

Արզուքանայն գովեմ զխորան,²
70 Որ ի Համեսս իւր պեղմութեան
Փակեալ զգէմս ի ծոց վիմին՝
Անակնկալ գայ յանդիման:

Ընդ մթին մուտն հեղ և խոնարհ
Ա'նց և յապշեա'ց ի գերահնար,
Ճարտարահիւս՝ մատին՝ այս գործ,
Ի մարտ արեանն ընդ քարտայու:

Յաջ և յահեակ խորանը, մատուք
Համանման փորակերտեալ.
Քնտիրը համայն և ամրակուք,
80 Յակտենից ի սբանչ եղեալ:

Սիւնք և որմունք, դուռն և կամար,
Միոյ մարմնոյ անդամբ անխաղ.
Ակն ի գագաթըն լուսավառ,
Խակ զարդ զլիույն—անզարդ իւր թագ:

ԵՐՊ. ԵՐԱԲՈՒՐՊ.

Բայց հիմ՝ չընադ երեսկայն
Կարաց ստեղծել զգիւտ նորահնար.
Առ ի այլ ևս աստ զապազայն
Կրթել յապուշ, ի զմայլ անմառ:

«Բորբոք սիրոյն երկնանախանձ»,
90 Այսպէս ճառէ ռամկալեղուն,
«Զորբազանն վառեալ զկայժ
Ի սիրտ եզրօրն և քեռ սիրուն»:

«Զաշխարհ, զկեանս հանեալ ի մտաց՝
Զերմ եռանդեամբ ինքնայորդոր՝
Յանապատ այս զան՝ լուսկաց,
Ի զէմն հեղուկ զիւրեանց իղձ նոր»:

¹ [բար <բակոբժան>
[զատճար]

² [ոպատ] <ժիշ>

աԵղբայրն անդ զիւր ուժ առնացի
Ըսդ լեռ քարին գնէ ի փորձ.
100 Իսկ բոյրն անդօր զհերս կանացի
Ի հմա նպաստ վարէ ի գործ»:

Մինն խորտակէ զվեմին գաղաթ.
Գրեամտեհալ ընդ ապառաժին.
Միւսն ի վեր կոէ ըղձակաթ՝
Զրեկորս ի հերս իւր փափկադին:

Մինն ի վաստակի իւր քրտնաշան
Խոնջեալ՝ Հանդշի ի ծմակ այրին.
Միւսն ի չերս սէր քեռական
Գայ սփոփին զնքտեալ մարմին:

Մինն ի պունջեան վհատեալ անյոյս,
110 Թիկն գործոյն զարձուցանէ.
Միւսն յերազի յերկնարաշ չոյս,
Վառեալ անդրէն զնա կազդուրէ:

Եւ երկնայնոց նուագ օրհնառաք
Խառն րնդ լուսոյն արենդին վառ՝
Հեղոյը ի սիրտ նոցա պապակ
Վերնոյն զշնորհ կճնպանարար

Զորք և քարայրք զեղգեղէին
Զնոցայն քրտանց ճիզն սիրալի,
Իսկ հոգեգէնք ամբառնային
120 Զհոյտ անյոյշ՝ նոցա ուխտի:—

Զուառումանուէր զործոյն վախճան
Հանեալ նոցա արդէն ի յանդ.
Կնքն ի մի սիրտ միարան՝
Եւ զկեանս իւրեանց զոհիլ յայս յարկի:— ա)

ԵՐԳ. ԵՐՐՈՐԴ:

Իսկ բռնաւորն աշխարհակալալ, թ.)
Որ ընդ ուն հՀոր համայն զիրան,
Զիւր զօրութիւն ի փորձ եղեան,
Կամէր և ուստ նուաճել ինքեան:

Զլէգէօն զօրացն իւր կիրթ
130 Եհեղ յայս վայր ի կործանումն.
Հազիւ միսեալ զնիզակ իւր բիրտ
Ի սուրբ նշանն Աստուածանուն,

Յեղակարծուստ անդ ձորամալոցն
Եցաւ զօրոց անմարմնական,
Ոմն կապտաղգիստ, ոմն կարմրանկար,
Երէժ ժպրհին՝ ակն յանդիման:

Շաբբարսսին կուրծ բնեկնալ անդ,
Առ իրան ձայնէ սասանա՞ր,
Ճե՞ս, ա՞նց՝ անմիտ հողածին՝ արդ.
40 Քեզ ուժ մզիսւ գու ի պայքարու դ)

Խուսն բազմութիւն ցնոի ի խոիւ,
Ոմն ընդ թիկունս պիւր աշ շանայ,
Ոմն քաւացեալ՝ անրան ձայնին
Ջրնկեսն ի դարձ կոչել շանալ:

Ալդա՞մ, պնօր գէշ անդ կրծարազիս
Դոչէ ամբոխն՝ յերկնապաստան,
Դոռոզ հողին պիւրշաղայս
Շնդ հանաչէ զփրկչին նշան:

ԵՐԳ. ԶՈՐՅՈՒՐԻ.

Այլ ո՞ւր այն գար սոկեկամար՝
50 Հայսաստանեայց կունց զօրութեան,
Որ զքեզ կառոյց՝ հրաշատաճ'ր,
Երուսէ անուսն յահմաճ արձան:

Նա Հոգեշունչ լեզուաւ եդ քեզ
Անոն ալլյորի», սիրս իմ այրիս: դ)
Ո՞ւր հարսնութեան մանեակ, բեհեզ
Ո՞ւր փեսային թադ, ծիրանի:

Շնդ ի տիսուր միայնութեան
Թեկորց ընսող, ապարանին
Հիմնաստապալ, ի շունչ անձայն հ)
60 Ջողիս քաղին անցաւորին:

Հերինք՝ տսա վեհն Տրդատ արքայ
Տարածանէր զբազուկս Հոգոր.
Այս աւերտիք՝ կայան նորս,
Այսոյէս խախտեալ զլուխ ի կոր:
Ճի՞մ Հայկաղումն աստ անխուզ
Դիմէկ ուխտել այնպէս ուրախ,
Ճի՞մ նորս աշը լորտասուաց ծով
Ու փոխին՝ յայս տեսիլ զաւն ա՞խ—

այ) Վասմախոն Հոգին Հայկազանց՝ ոչ կամելով տալ զմարտարագործ
այս և զանօրինակ այս շինուած վանից Գեղարդայ՝ բազկացելոյ յամբողջ ա-
պառաժէ՝ մարդկային հնարից և հմտութեան, թողեալ է ի շրթունս յետնոր-
դաց զշբնազածին զայս ստեղծաբանութիւն մտացածին որ տակաւին ևս տեսէ
ի մէջ Հայաստանեայց որդուց հետազայ կերպիւս Թոյր և նդրայր յազնուա-
տում տանէ՝ փափափելով թողով յաշխարհի պղիշատակարան անմատէ, ա-
ռանձնանան յայս ձոր և սկսանին կերտել զայս տաճարը ի բազում ժամանակա-
ոչ գիտելով երիտասարդին, թէ ո՞ւստի սկսանից զշբնութիւն՝ խնդրէ յԱստու-
ծոյ յայտնել նմա զտեզին: Յառաւուսուս միութ յարուցեալ ի թոյր տեսանէ
զկուտն իւր եղեալ ի ծայր ապառաժին: Անք ի ձեռն տայ հատանել զառիվայլը
տատի կոյսն տատուածաւարուն ի վեր հանէ հերօք իւրովք զամենայն բնկորս
բարանց: Այսօրինակ շարունակելով զրազմաքիրան վաստակ իւրեանց, բա-
նան հետզհետէ զյարգանդ վիմին ի հրաշակառոյց տաճար Աստուածային,
յաւարու որոյ մնան ինքեան ի սպաս և ի բնակութիւն երկնամասն ձեռագործի
իւրեանց, որ կերեն ի վախճանի և զիկանս իւրեանց երկնանուէր:

ը) Երկրորդ հրաշաբանութիւն այսպէս հնչէ: Աշխարհակալին լենգլի-
անուայ լուեալ զանուանիր հրաշագործութեանց սրբազան վանիցս՝ և գորով
հեթանոս ապառում, անձամբ անձին զիմէ ի փորձ լինել պատմաբանութեանս:
Անթիւ զօրօք յարձակի ի ձորն ամայի հրամայէ յոխորութանօք ծայրաբանելով
բերել նմա զուրբը նշանն Պեղարդայ: Բայց այն ինչ ձեռք բարձրացուցանեն
զնիդակն առ հարկանել զուրբը նշանն, աստուածային, յական թօթափել
գունդը թիւրաւոր զօրաց անմարմնոց, զրահաւորեալ և ի զգեստս, երփներան-
գրս յարձակին ի վերայ ամենուստեթի Թշնամին սուրբ հաւատոյ ոչ կարացեալ
տանել անգամ և զտեսիլ զայս ահաւոր, տեսանելով մահաւանդ զշփոթ և
զշարուած իւրայնոցն, յորոց բազմաց դէմ ի թիւկուն դառնայ, այլոց ձեռք
դուանան բազմաց կուրութիւն յախտենական փակէ զըոյսն տունչեան այլք իրոք
արձան անկենզան անդ մնան կարիւտեալ, զունայ առ իւրան ողբազին և գոչէ:

դ) Ազամ, գեօր, գեշ որ տանձկերեն նշանակում է, Տիր իմ, տես, անց:
ապա մեծաւ հառաշանօր մազիթ զթողութիւն, ընծայէ զպարգես մեծամեծա և
զանայ յետս: Այսպէս անուանեն մինչև ցայսօր և տաճիկը զուրբը նշանն
Պեղարդայ և ոչ պակաս ի բրիստոնեից պաշտեն զայն:

դ) Վանին Սրբոյն Պեղարդայ է կառուցեալ յանուն սուրբ կույսին, բայց
ի պատմագիրս հայոց ալլիրի վանքու կոշի, որ անուն յիրափ ըստ իմ կարծեաց
իսկապէս նկարագրէ զայժմեան այրիութիւն նորա և ամայի վիճակ:

ե) Իրեւ տասն վերստ հետի ի վանիցս մերձ գեղջն Գառնի ի հարաւա-
կողմն ի ծագ բարձրագիր և լայնանիսսա ապառաժի միոյ տեսանին տակաւին
աւերակը ամբոցին և ճարտարաշէն հատուածի միոյ որովց ապարանացն
մեծագօր արբային Հայոց, Տրդատայ Արշակունոյ, զոր շինեացն նա ի բնա-
կարան վայելու ամուսնոյ իւրոյ սիրելուոյ Այս բարինը միայն բաւական են
յապացոյց կենդանի՝ նախնի փառաց արբայից Հայոց և ճարտարագործու-
թեան ազգին մեր յայն ժմանակս, զոր տեսանոզն ա՞ն- զնուր շնչէ ի խո-
րոց սրափ աւազելով զկորուստ փառաց աշխարհահայուսին Հայաստանի:
Միարալի է աստի ահագնաձոր տեսիլ սրարշավն Գառնի զիտոյ, կանաչազարդ
ձոր նորայ և փրփրագեղ ազրիւրք, որք յամենայն կուտէ՝ բորբոքելով, գզըր-
գալով ի ծոց նորա որկախառնին առ ի բեղմնաւորել պաղաքերի զիսնկարեր
գաշտս Հայաստանի:

ՅՈՒՆԱՅՆՈՒԹԻՒՆ ԱՇԽԱԼԲՀԵ.

1 Յաշխոյժ հասակի ծաղկազարդ կեհաց
Ջմալիմ ի հրապոյր կրից հեշտակեաց.
Բայց՝ ո՞չ իմ շքնազ ծաղիկ թարշամեալ,
Յոր դէմք իմ կարօս՝ սիրահար յաղշեալ:
Մնաց ի սրահս թափուր անապատ,
Եւ ևս գոշեմ: «Սէրն է ցնորք անհաստատ»:

Յարբունս հասակի սիրեմ զդրգանս.
Գանձք, փարթամութիւնք ամոքեն զիմ կեանս.
Բայց փոխան բախտի, աւուրց զուարձալեաց,
10 Կոկիծ սրտամաշք՝ ո՞չ, ինձ մասն մնաց:
Յալիս ծերութեան թողեալ իմ զցնորս,
Յունայն են, ասեմ, գրգանք նեշտախորժ:

Եաւդին ճշմարիտ ի խնդիր ելի.
Ամէնից զպառնառ զիտել կամէի:
Բայց մէ՞զ զգազտնեաց բանալիս զտանել,
Մէ՞զ զիմաստութեան զնործանս շոփել,
Յուրը՝ ամենայն զիտուրինը մեր աստ,
Մեր իմաստուրին, յունայն, անհաստատ:

Առ իմէ՞ ունիլ զձեռս բռնակալու,
20 Մինչ իշխանութեամբ ևս չեմք յանդորրու,
Մինչ անկուշա մեր սիրու մնաց անխաղադ.
Կարե՞մք տալ ալլոց հանդիսա անխարդախու,
Ընդ յարկաւ եղնեալոյ յայգիս հոգեվմայլ
Ի զիրկս թռ սի՞րեն՝ սիրով թռվ վառեալ,
Տակաւին իմ կեանք մաշէին անբոյժ.
Ուր բախտն, մինչ նոզին շունի զայն աշխոյժ:

Գերիք հեշտասունք ոչ ծանեան քնառ
Զիմ վշառութեան զսդեսպառ քզառ.
Բթացաւ իմ ճաշակ, վատնեցան զզացմունք:
30 Զիս խանգարեցին քնդ վայր՝ փափէութիւնք:
Կարէ՞ իննել բաղցր՝ բանական նորոյն,
Որ չե՛ կարեռ, բայց միշտ անկայուն:

Գոմ գործէի միշտ ձանալել զմարդիկ.
Մանեայ, և ի ցաւ սրտիս թափառիկ.
Ողբացի զվիճակ նոցա սոսկալի,
Զշար նոցա սիրս թշուառ, նողկալի:
Նորա՝ թշնամիթ իրեանց թշնամեաց,
Թշնամիթ ինքնանց և բարեկամաց:

Անդ հեզու տնանկն զարտօսր ցաւագին.
40 Անմեղն զրպարտի յատեան շարաբնին.
Յիժարն ի պատուի, յարդի միշտ փառօք,
Ամրարիշտն քաղէ զվարդն կենաց՝ լոկ,
Բարեաց միայն՝ փուշ բռասնի յամայր.
Անդ է, նոցա միշտ պատիր այս աշխարհ:—

Հայեաց ի ծիծաղ անհաւատարմին:
Սիրահարն այրի ի կոկիծ սրտին.
Սիրուհին տայ զինքն այլում՝ ցնծալով,
Որ ի գէմն նորա զմայի պանծալով
Բայց փութով նա զիւր խախտեացէ զերդումն,
50 Փուրով և նա ինըն խարեսցի յայլում:

Խախանձն շարագլուխ՝ ամենայնուրիք
Ծչէ օձանման, ո'չ խնայէ ումէք:
Զիր,¹ քանքար, արդինք ճշմարիտ քո զին
Մշան միշտ անվարձ և ո'չ ձանալին.
Ում բարիտ տանեն, զշարն ստանաս,
Քարեղին սրտից զի՞նչ փոյր՝ նոզոյդ մաշ:

Զիւր թոյն դառնութեան վատաբան լեզուն
Բափէ ի գլուխ՝ անբախտ իմաստնոյն.
Գատաւորն արդար ո'չ զոր քննէ.
60 Կիրը միսյն խօսեն զամենայն յանձնէ:
Փառամոլն արդիօթ կարէ՝ իմանալ,
Բէկ զոն յաշնաբահս անբախտը՝ վշտագնեալ:
Բայց ինքն է թշուառն, ոչ զիտելով, հիմ. —
Յանկայ ստանալ, ունի, նեզորտի,
Յանկայ զնոր ինչ, ցանկայ և եթ միայն:
Ինըն թշնամի՝ իրում ժառանգի
Ժառանցն սպանել չանայ զնորա կեանս:

Ծնից ահազիասաստ ալիս օվկիանի
Միհայ երերուն մեր նու բեկանի.
70 Յաղամուղը մթոյ մբրկայոյդ հողմոյ

Նաւեմք յառաջիոյս առ արին յուսով,
Բայց հողմն կատաղի կրկնաբռուն ուժով
Բանայ մեզ զծովն՝ գերեզման վրդով:

Կոյք են միտք, զաշացու, տկար,
Որ պատրեացն զնախնիս մեր աստ¹ շարաշար,
Նայն և զմեզ պատրէ անխնայաբար:
Գիտութիւնք նոցա թուին մեզ վտառ
Եւ մերն յետնորդաց լիցի՝ անյարիր.
Յաջորդք մեր զնոյն ոմիցին վճիռ:

80 Նոր շի՛ք ինչ իրեէք առ ենթալումնեաւ,
Որ ինչ գոյ, կամ էր, լիցի միշտ անզրաւ
Եւ յառա՛ջն հեղաւ արիւն գետօրէն:
Եւ յառա՛ջն սրաց մարդն զիւր վիճակ¹ աստէն:
Եւ յառա՛ջն եղեւ նա զո՞ւ օրհասին,
Ցուսոյ, մոլութեան, թուկութեան մեղիին:

Թագակալն, ստրուկն, իմաստունն, անմիտն,
Անմեղն, յանցաւորն, անսաստ շարամիտն
Բարձրին զերթ ստուեր, մի նոցա վախնան.
Ամէնիցն սպառնայ մա՞ս և գերեզման.

90 Մի դաշտ ծաղկի վասն գառին և վագեր,
Մի դաշտ սնուցանէ, Խղճաց նեղսարեր՝
Հանդիմ երկրի զերթ վշտահար² պաշտպանն.
Մի մամուռ ծածկէ զնոցա սառն տապան:

Պանծա՛, մեծամիտդ ի փառս և ի գործու.
Ջի՞նչ օգտեն արձանք. լիցիս ցաւակոծ.
Ազգն և բարեկամք զքեզ մոռասցին.
Անհնա քո մոխիր ի զրի միթն:
Հի՞մ մրրկածուփ ստո կեանք՝ արդարոյն:
Այլ մեռ տակաւին ցանկալի զեռ կեալ:
100 Հիմ իշխանութիւն և փառք անկայուն.
Այլ ձգտեմք ցնորից հպատակ միշտ կալ:
Սիրեմք, որ ինչ բնաւ չէ՝ արժան սիրել.
Խնդրեմք, զոր ինչ բնաւ լի՛ք հնար զտանել:

Թշուա՛ ո հողածին, տկա՛ր, դու անզօր.
Ի վիշտս՝ ախ, քո կեանք անցցեն ամէն օր:
Վերշացան աւորք քո ի դառն տանշանս.
